

# ՀԱՅԿ. ԴԱՏԸ

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ԹԵՐԹԻ ՄԸ ԱԶԴԸ

### ՎԱՆ, ԷՐԶՐՈՒՄ, ՊԻԹԼԻՍ ԵՒ ՏՐԱՊԶՈՆ ՊԷՏՔ Է ԿՑՈՒԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ամերիկեան մեծ օրաթերթը) Նիւ-Եօրք Հերալդ Թրիպլին) պարբերաբար «ազդեր» կը հրատարակէ արարական) հրէական և ին. դատերու մասին (ամբողջ մէկ էջ)՝ յիշեցնելով թէ ծանուցում է:

Թերթը Յուլիս 4ի թիւին մէջ) երկու զոյգ սիւնակ ալ յատկացուցած էր Հայկական Դատին) «Հայկական Իրաւունքներու Ամերիկեան Կօմիտէ»ին ստորագրութեամբ: Ազդին մէջ կ'երեւայ Հայունի մը) վարդունի) «պայծառ խորհրդանշանը Հայաստանի մը — ազատ) երջանիկ և ապահով»): Յետոյ քարտէս մը) — 1. Խ. Հայաստանը) 11.000 քառ. մղոն տարածութեամբ) «չատ փոքր ընդունելու համար այն հարիւր հազարաւոր Հայերը որ կ'ուզեն իրենց հայրենիքը վերադառնալ բազմաթիւ երկիրներէ ուր կ'ապրին իբրև տարագիրներ. — 2. Ուիլսընեան Հայաստանը (Կարին) Պիթլիս) Վան) Տրապիզոն) Ինչպէս և Կարս—Արտահան). — 3. Թուրքիոյ մնացեալ մասը:

Պարզելով Հայկ. Հարցին մարդկային կողմը) յայտարարութիւնը կ'ըսէ — «Աշխարհի վրայ ոչ մէկ ժողովուրդ այնքան տառապանք) զըրկանք և գերութիւն կրած է որքան հայ ժողովուրդը դարերու ընթացքին: Թէ ան ի'չնպէս պահած է իր քրիստոնէական կրօնը) լեզուն և վերջնական ազատութեան յոյսը՝ հրաշք մըն է մեզ լուրիս համար... Այժմ հայ ժողովուրդը և իրենց ներկայացուցիչները կեցած են աշխարհի մեծ պետութեանց առջև և Միացեալ Ազգերու կազմակերպութեան կը ներկայացնեն իրենց դատը: Անոնք կը պահանջեն Հայուն իրաւունքը իր հայրենիքին վրայ) որ սրբագործուած է իր արիւնով) քրտինքով և արցունքներով) և ծածկուած իրենց մշակոյթի նշանաւոր յիշատակներով»): (Հատուած մը ծերակուտական Չարլզ Թոպիի ճառէն):

Ուրիշ հատուած մը) քարտէսին տակ. — «Հայ ժողովուրդին համար արդարութիւնը կը պահանջէ Հայաստանի վերադարձնել Կարսի) Արտահանի) Տրապիզոնի) Էրզրումի) Վանի և Պիթլիսի նահանգները) զանոնք կցելով Խ. Հայաստանի) իբրև հարենիք մը բոլոր ցիրուցան Հայերուն որ կ'ուզեն վերադառնալ»:

Եւ վերջապէս) հատուած մը Սան Ֆրանչիսքոյի խորհրդաժողովին ներկայացուած յուշագրէն. — «Արարատ լեռն անգամ) հայ ժողովուրդին հպարտութիւնն ու փառքը և իրենց յոյսերուն ու տենչերուն ամենէն արտայայտիչ խորհրդանշանը հազարաւոր տարիէ ի վեր) կը մնայ թրքական իշխանութեան տակ»: